Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 27
Առանձին ֆինանսական հաշվետվություններ

Նպատակը

1. Սույն ստանդարտի նպատակն է սահմանել դուստր կազմակերպություններում, համատեղ ձեռնարկումներում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հաշվառման և բացահայտման պահանջները այն դեպքի համար, երբ կազմակերպությունը պատրաստում է առանձին ֆինանսական հաշվետվություններ:

Գործողության ոլորտը

2. Սույն ստանդարտը պետք է կիրառվի դուստր կազմակերպություններում, համատեղ ձեռնարկումներում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառելիս, երբ կազմակերպությունը կամավոր որոշում է, կամ ազգային կանոնակարգերի համաձայն պարտավոր է ներկայացնել առանձին ֆինանսական հաշվետվություններ:

3. Սույն ստանդարտը չի սահմանում, թե որ կազմակերպությունները պետք է ներկայացնեն առանձին ֆինանսական հաշվետվություններ: Այն կիրառվում է, երբ կազմակերպությունը պատրաստում է առանձին ֆինանսական հաշվետվություններ, որոնք համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին:

Սահմանումներ

4. Հետևյալ տերմինները սույն ստանդարտում օգտագործված են ստորև նշված իմաստներով.

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ. **խմբի ֆինանսական հաշվետվություններ, որտեղ մայր կազմակերպության և դուստր կազմակերպությունների ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը, եկամուտները և ծախսերը, ինչպես նաև դրամական հոսքերը ներկայացվում են որպես մեկ տնտեսական կազմակերպության համար ներկայացվող ֆինանսական հաշվետվություններ:**

Առանձին ֆինանսական հաշվետվություններ. **կազմակերպության կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվություններ, որոնցում կազմակերպությունը կարող է ընտրել, սույն ստանդարտի պահանջներին համապատասխան, դուստր կազմակերպություններում, համատեղ ձեռնարկումներում և ասոցիացված կազմակերպություններում իր ներդրումները հաշվառել կամ ինքնարժեքով՝**

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

«*Ֆինանսական գործիքներ*» ՖՀՄՍ 9-ին համապատասխան, կամ բաժնեմասնակցության մեթոդով, ինչպես նկարագրված է «*Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում*» ՀՀՄՍ 28-ում:

5. Ստորև բերված տերմինները սահմանված են *«Համախմբված ֆինանսական հաշվետվություններ»* ՖՀՄՍ 10-ի Հավելված Ա-ում, *«Համատեղ պայմանավորվածություններ»* ՖՀՄՍ 11-ի Հավելված Ա-ում և ՀՀՄՍ 28-ի պարագրաֆ 3-ում՝
   - ասոցիացված կազմակերպություն,
   - ներդրման օբյեկտի նկատմամբ հսկողություն,
   - բաժնեմասնակցության մեթոդ,
   - խումբ,
   - ներդրումային կազմակերպություն,
   - համատեղ հսկողություն,
   - համատեղ ձեռնարկում,
   - համատեղ ձեռնարկող,
   - մայր կազմակերպություն,
   - նշանակալի ազդեցություն,
   - դուստր կազմակերպություն:
6. Առանձին ֆինանսական հաշվետվություններ. ներկայացվում են ի լրումն համախմբված ֆինանսական հաշվետվությունների, կամ ի լրումն այն ներդրողի ֆինանսական հաշվետվությունների, որը չունի ներդրումներ դուստր կազմակերպություններում, բայց ունի ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում կամ համատեղ ձեռնարկումներում, և այդ ներդրումները ՀՀՄՍ 28-ով պահանջվում է հաշվառել բաժնեմասնակցության մեթոդով, բացառությամբ՝ 8-8Ա պարագրաֆներում սահմանված հանգամանքների:
7. Դուստր կազմակերպություն, ասոցիացված կազմակերպություն կամ էլ համատեղ ձեռնարկումում համատեղ ձեռնարկողի բաժնեմաս (մասնակցություն) չունեցող կազմակերպության ֆինանսական հաշվետվություններն առանձին ֆինանսական հաշվետվություններ չեն հանդիսանում:
8. Կազմակերպությունը, որը ՖՀՄՍ 10-ի 4(ա) պարագրաֆին համապատասխան ազատված է համախմբված ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելուց կամ ՀՀՄՍ 28-ի (վերանայված 2011 թվականին) պարագրաֆ 17-ի համաձայն՝ բաժնեմասնակցության մեթոդը կիրառելուց, կարող է առանձին ֆինանսական հաշվետվությունները ներկայացնել որպես իր միակ ֆինանսական հաշվետվություններ:

8Ա. Ներդրումային կազմակերպությունը, որից պահանջվում է ընթացիկ և ներկայացված բոլոր համադրելի ժամանակաշրջանների համար կիրառել իր բոլոր դուստր կազմակերպությունների համախմբման բացառությունը՝ համաձայն ՖՀՄՍ

10-ի պարագրաֆ 31-ի, ներկայացնում է առանձին ֆինանսական հաշվետվություններ՝ որպես իր միակ ֆինանսական հաշվետվություններ:

Առանձին ֆինանսական հաշվետվությունների պատրաստում

9. Առանձին ֆինանսական հաշվետվությունները պետք է պատրաստվեն բոլոր կիրառելի ՖՀՄՍ-ների համապատասխան՝ բացառությամբ պարագրաֆ 10-ում ներկայացվածների:

10. Երբ կազմակերպությունը պատրաստում է առանձին ֆինանսական հաշվետվություններ, այն պետք է դուստր կազմակերպություններում, համատեղ ձեռնարկումներում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառի՝

ա) ինքնարժեքով,

բ) ՖՀՄՍ 9-ի համապատասխան, կամ

գ) բաժնեմասնակցության մեթոդով, ինչպես նկարագրված է ՀՀՄՍ 28-ում:

Կազմակերպությունը պետք է հաշվապահական հաշվառման միևնույն մոտեցումը կիրառի ներդրումների յուրաքանչյուր կատեգորիայի համար: Ինքնարժեքով կամ բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումները պետք է հաշվառվեն *«Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն»* ՖՀՄՍ 5-ին համապատասխան, երբ դրանք դասակարգվում են որպես վաճառքի կամ բաշխման համար պահվող (կամ ներառվում են որպես վաճառքի կամ բաշխման համար պահվող դասակարգված օտարման խմբում: ՖՀՄՍ ՖՀՄՍ 9-ին համապատասխան հաշվառվող ներդրումների չափումը նման հանգամանքներում չի փոփոխվում:

11. Եթե կազմակերպությունը ՀՀՄՍ 28-ի (վերանայված՝ 2011 թվականին) պարագրաֆ 18-ի համապատասխան ընտրում է ասոցիացված կազմակերպություններում կամ համատեղ ձեռնարկումներում իր ներդրումները ՖՀՄՍ 9-ի համապատասխան չափել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ապա այն իր առանձին ֆինանսական հաշվետվություններում ևս այդ ներդրումները պետք է չափի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

11Ա. Եթե, ՖՀՄՍ 10-ի պարագրաֆ 31-ի համաձայն, մայր կազմակերպությունից պահանջվում է դուստր կազմակերպությունում իր ներդրումը չափել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով՝ ՖՀՄՍ 9-ին համապատասխան, այն պետք է նաև նույն կերպ հաշվառի դուստր կազմակերպությունում իր ներդրումը իր առանձին ֆինանսական հաշվետվություններում:

11Բ. Երբ մայր կազմակերպությունը դադարում է լինել որպես ներդրումային կազմակերպություն կամ դառնում է ներդրումային կազմակերպություն, պետք է այդ փոփոխությունը հաշվառի այն ամսաթվից, երբ կարգավիճակի փոփոխությունը տեղի է ունեցել հետևյալ կերպ՝

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ա) երբ կազմակերպությունը դադարում է լինել որպես ներդրումային կազմակերպություն, այն պետք է դուստր կազմակերպությունում ներդրումը հաշվառի պարագրաֆ 10-ի համաձայն: Կարգավիճակի փոփոխման ամսաթիվ պետք է համարվի պայմանական ձեռքբերման ամսաթիվը: Երբ ներդրումը հաշվառվում է պարագրաֆ 10-ի համաձայն, ապա պայմանական ձեռքբերման ամսաթվի դրությամբ դուստր կազմակերպության իրական արժեքը պետք է ներկայացնի փոխանցված պայմանական հատուցումը,

(i) [հանված է]

(ii) [հանված է]

բ) երբ կազմակերպությունը դառնում է ներդրումային կազմակերպություն, այն պետք է դուստր կազմակերպությունում ներդրումը հաշվառի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն: Դուստր կազմակերպության նախորդ հաշվեկշռային արժեքի և դրա իրական արժեքի միջև եղած տարբերությունը, ներդրողի կարգավիճակի փոփոխման ամսաթվի դրությամբ, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում՝ որպես օգուտ կամ կորուստ: Այդ դուստր կազմակերպությունների գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված ցանկացած օգուտի կամ կորստի կուտակված գումարը պետք է հաշվառվի այնպես՝ համարելով, որ ներդրումային կազմակերպությունը, կարգավիճակի փոփոխման ամսաթվի դրությամբ, այդ դուստր կազմակերպությունները օտարել է:

12. Դուստր կազմակերպությունից, համատեղ ձեռնարկումից կամ ասոցիացված կազմակերպությունից շահաբաժինները ճանաչվում են կազմակերպության առանձին ֆինանսական հաշվետվություններում, երբ սահմանված է կազմակերպության՝ շահաբաժինը ստանալու իրավունքը: Շահաբաժինը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ բացառությամբ երբ կազմակերպությունը չի ընտրել օգտագործել բաժնեմասնակցության մեթոդը, որի դեպքում շահաբաժինը ճանաչվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի նվազեցում:

13. Երբ մայր կազմակերպությունը վերակառուցում է իր խմբի կառուցվածքը՝ հիմնադրելով նոր կազմակերպություն, որպես իր մայր կազմակերպություն, այնպիսի եղանակով, որը բավարարում է հետևյալ չափանիշները՝

ա) նոր մայր կազմակերպությունը ստանում է սկզբնական մայր կազմակերպության հսկողությունը՝ թողարկելով բաժնային գործիքներ սկզբնական մայր կազմակերպության բաժնային գործիքների դիմաց,

բ) նոր խմբի և սկզբնական խմբի ակտիվներն ու պարտավորությունները վերակառուցումից անմիջապես առաջ և հետո նույնն են, և

գ) սկզբնական մայր կազմակերպության սեփականատերերը վերակառուցումից առաջ ունեն նույն բացարձակ և հարաբերական մասնակցությունը

(բաժնեմասերը) սկզբնական խմբի և նոր խմբի զուտ ակտիվներում՝ վերակառուցումից անմիջապես առաջ և հետո,

և նոր մայր կազմակերպությունն իր ներդրումը սկզբնական մայր կազմակերպությունում իր առանձին ֆինանսական հաշվետվություններում հաշվառում է 10(ա) պարագրաֆին համապատասխան, նոր մայր կազմակերպությունը պետք է ինքնարժեքը չափի սկզբնական մայր կազմակերպության առանձին ֆինանսական հաշվետվություններում վերակառուցման ամսաթվի դրությամբ արտացոլված սեփական կապիտալի հոդվածներում իր բաժնի հաշվեկշռային արժեքով:

14. Նմանապես, մայր կազմակերպություն չհանդիսացող կազմակերպությունը կարող է հիմնադրել մի նոր կազմակերպություն՝ որպես իր մայր կազմակերպություն, այնպիսի եղանակով, որը բավարարում է 13-րդ պարագրաֆում նշված չափանիշները: 13-րդ պարագրաֆում նշված պահանջները հավասարապես կիրառվում են այդպիսի վերակառուցումների համար: Այդպիսի դեպքերում «սկզբնական մայր կազմակերպությանը» և «սկզբնական խմբին» արվող հղումները պետք է հասկանալ որպես հղում «սկզբնական կազմակերպությանը»:

Բացահայտում

15. Առանձին ֆինանսական հաշվետվություններում բացահայտումներ ներկայացնելիս՝ կազմակերպությունը պետք է կիրառի բոլոր կիրառելի ՖՀՄՍ-ները, ներառյալ՝ 16- 17 պարագրաֆներում ներկայացված պահանջները:

16. Երբ մայր կազմակերպությունը ՖՀՄՍ 10-ի 4(ա) պարագրաֆին համապատասխան որոշել է չպատրաստել համախմբված ֆինանսական հաշվետվություններ և փոխարենը պատրաստում է առանձին ֆինանսական հաշվետվություններ, ապա մայր կազմակերպությունն այդ առանձին ֆինանսական հաշվետվություններում պետք է բացահայտի՝

ա) այն փաստը, որ այդ ֆինանսական հաշվետվություններն առանձին ֆինանսական հաշվետվություններ են, և որ օգտագործվել է համախմբման բացառությունը, այն կազմակերպության անվանումը և հիմնական գործունեության վայրը (և գրանցման երկիրը, եթե տարբեր է) որը պատրաստել է հանրության կողմից օգտագործման համար հասանելի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին, ինչպես նաև այն հասցեն, որտեղ կարելի է ձեռք բերել այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունները,

բ) դուստր կազմակերպություններում, համատեղ ձեռնարկումներում և ասոցիացված կազմակերպություններում նշանակալի ներդրումների ցանկը, ներառյալ՝

(i) այդ ներդրման օբյեկտների անվանումը,

(ii) այդ ներդրման օբյեկտների հիմնական գործունեության վայրը (գրանցման երկիրը, եթե տարբեր է),

(iii) այդ ներդրման օբյեկտներում իր սեփականության բաժնեմասը (և քվեարկության իրավունքների իր բաժնեմասը, եթե վերջինս տարբերվում է սեփականության բաժնեմասից),

գ) (բ) կետում նշված ներդրումների հաշվառման համար օգտագործված մեթոդների նկարագրությունը:

16Ա. Երբ մայր կազմակերպություն հանդիսացող ներդրումային կազմակերպությունը (բացառությամբ 16-րդ պարագրաֆում նշված մայր կազմակերպության), պարագրաֆ 8Ա-ի համաձայն, պատրաստում է առանձին ֆինանսական հաշվետվություններ՝ որպես իր միակ ֆինանսական հաշվետվություններ, պետք է բացահայտի այդ փաստը: Ներդրումային կազմակերպությունը պետք է նաև ներկայացնի «*Այլ կազմակերպություններում մասնակցության բացահայտում*» ՖՀՄՍ 12-ով պահանջվող՝ ներդրումային կազմակերպություններին վերաբերող բացահայտումները:

17. Երբ մայր կազմակերպությունը (բացառությամբ 16-16Ա պարագրաֆներում նշված մայր կազմակերպութան) կամ ներդրման օբյեկտի նկատմամբ համատեղ հսկողություն կամ նշանակալի ազդեցություն ունեցող ներդրողը պատրաստում են առանձին ֆինանսական հաշվետվություններ, ապա մայր կազմակերպությունը կամ ներդրողը պետք է նույնականացնի ՖՀՄՍ 10-ին, ՖՀՄՍ 11-ին կամ ՀՀՄՍ 28-ին (վերանայված 2011 թվականին) համապատասխան պատրաստված ֆինանսական հաշվետվությունները, որոնց դրանք վերաբերում են: Մայր կազմակերպությունը կամ ներդրողն իր առանձին ֆինանսական հաշվետվություններում պետք է նաև բացահայտի՝

ա) այն փաստը, որ այդ հաշվետվությունները առանձին ֆինանսական հաշվետվություններ են, ինչպես նաև դրանց պատրաստման պատճառները, եթե պատրաստումը օրենքով չի պահանջվում,

բ) դուստր կազմակերպություններում, համատեղ ձեռնարկումներում և ասոցիացված կազմակերպություններում նշանակալի ներդրումների ցանկը, ներառյալ՝

(i) այդ ներդրման օբյեկտների անվանումը,

(ii) այդ ներդրման օբյեկտների հիմնական գործունեության վայրը (գրանցման երկիրը, եթե տարբեր է),

(iii) այդ ներդրման օբյեկտներում իր սեփականության բաժնեմասը (և քվեարկության իրավունքների իր բաժնեմասը, եթե վերջինս տարբերվում է սեփականության բաժնեմասից),

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

գ) **(բ) կետում նշված ներդրումների հաշվառման համար օգտագործված մեթոդների նկարագրությունը:**

Ուժի մեջ մտնելը և անցումային դրույթներ

18. Կազմակերպությունը սույն ստանդարտը պետք է կիրառի 2013 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը կիրառում է սույն ստանդարտը ավելի վաղ, պետք է բացահայտի այդ փաստը և միևնույն ժամանակ կիրառի ՖՀՄՍ 10-ը, ՖՀՄՍ 11-ը, ՖՀՄՍ 12-ը և ՀՀՄՍ 28-ը (վերանայված 2011 թվականին):

18Ա. «*Ներդրումային կազմակերպություններ*» (ՖՀՄՍ 10-ի, ՖՀՄՍ 12-ի և ՀՀՄՍ 27-ի փոփոխություններ), հրապարակված 2012 թվականի հոկտեմբերին, փոփոխվել են 5, 6, 17 և 18 պարագրաֆները և ավելացվել են 8Ա, 11Ա-11Բ, 16Ա և 18Բ-18Թ պարագրաֆները: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունները 2014 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Վաղ ընդունումը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը կիրառում է այդ փոփոխությունները ավելի վաղ, պետք է բացահայտի այդ փաստը և կիրառի «*Ներդրումային կազմակերպություններ*» փաստաթղթում ներառված բոլոր փոփոխությունները միաժամանակ:

18Բ. Եթե «*Ներդրումային կազմակերպություններ*» փաստաթղթի փոփոխությունների սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (որը, սույն ՖՀՄՍ-ի նպատակներով, այն տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկիզբն է, երբ այդ փոփոխությունները առաջին անգամ են կիրառվում) մայր կազմակերպությունը եզրակացնում է, որ ինքը ներդրումային կազմակերպություն է, ապա դուստր կազմակերպությունում իր ներդրման համար պետք է կիրառի 18Գ-18Թ պարագրաֆները:

18Գ. Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ ներդրումային կազմակերպությունը, որը նախկինում դուստր կազմակերպությունում իր ներդրումը չափել է ինքնարժեքով, պետք է այդ ներդրումը չափի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով՝ համարելով, որ սույն ՖՀՄՍ-ի պահանջները միշտ ուժի մեջ են եղել: Ներդրումային կազմակերպությունը պետք է հետընթաց ճշգրտի սկզբնական կիրառման ամսաթվին անմիջապես նախորդող տարեկան ժամանակաշրջանը և պետք է ճշգրտի անմիջապես նախորդող ժամանակաշրջանի սկզբին չբաշխված շահույթը՝

ա) ներդրման նախորդ հաշվեկշռային արժեքի, և

բ) դուստր կազմակերպությունում ներդրողի ներդրման իրական արժեքի միջև եղած ցանկացած տարբերությամբ:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

18Դ. Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ ներդրումային կազմակերպությունը, որը նախկինում դուստր կազմակերպությունում իր ներդրումը չափել է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, պետք է շարունակի այդ ներդրումը չափել իրական արժեքով: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված ցանկացած իրական արժեքի ճշգրտման կուտակված գումարը պետք է փոխանցվի չբաշխված շահույթ՝ սկզբնական կիրառման ամսաթվին անմիջապես նախորդող տարեկան ժամանակաշրջանի սկզբի դրությամբ:

18Ե. Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ ներդրումային կազմակերպությունը չպետք է ճշգրտումներ կատարի դուստր կազմակերպությունում մասնակցության նախկին հաշվառման մեջ, որը նախկինում ընտրել է չափել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն, ինչպես թույլատրվում է պարագրաֆ 10-ում:

18Զ. Նախքան «*Իրական արժեքի չափումը*» ՖՀՄՍ 13-ի ընդունման ամսաթիվը՝ ներդրումային կազմակերպությունը պետք է օգտագործի ներդրողներին կամ ղեկավարությանը նախկինում ներկայացված իրական արժեքի գումարները, եթե դրանք իրենցից ներկայացնում են մի գումար, որի համար ներդրումը կարող է, գնահատման ամսաթվի դրությամբ, փոխանակվել իրազեկ, պատրաստակամ կողմերի միջև՝ «պարզած ձեռքի հեռավորության գործարքում»:

18Է. Եթե, 18Գ-18Զ պարագրաֆների համաձայն, դուստր կազմակերպությունում ներդրման չափումը գործնականում հնարավոր չէ (ինչպես սահմանված է «*Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ*» ՀՀՄՍ 8-ում), ներդրումային կազմակերպությունը պետք է կիրառի սույն ՖՀՄՍ-ի պահանջները ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին, երբ 18Գ-18Զ պարագրաֆների կիրառումը գործնականում հնարավոր է, որը կարող է լինել ընթացիկ ժամանակաշրջանը: Ներդրողը պետք է հետընթաց ճշգրտի սկզբնական կիրառման ամսաթվին անմիջապես նախորդող տարեկան ժամանակաշրջանը, եթե ամենավաղ ժամանակաշրջանի սկիզբը, երբ սույն պարագրաֆի կիրառումը գործնականում հնարավոր է, չի հանդիսանում ընթացիկ ժամանակաշրջանը: Եթե այն ամսաթիվը, երբ ներդրումային կազմակերպությունը գործնականում կարող է չափել դուստր կազմակերպության իրական արժեքը, համարվում է ավելի վաղ, քան անմիջապես նախորդող ժամանակաշրջանի սկիզբը, ներդրողը անմիջապես նախորդող ժամանակաշրջանի սկզբին սեփական կապիտալը պետք է ճշգրտի՝

ա) ներդրման նախորդ հաշվեկշռային արժեքի, և

բ) դուստր կազմակերպությունում ներդրողի ներդրման իրական արժեքի միջև եղած ցանկացած տարբերությամբ:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Եթե ամենավաղ ժամանակաշրջանը, երբ սույն պարագրաֆի կիրառումը գործնականում հնարավոր է, համարվում է ընթացիկ ժամանակաշրջանը, սեփական կապիտալի ճշգրտումը պետք է ճանաչվի ընթացիկ ժամանակաշրջանի սկզբին:

18Ը. Եթե ներդրումային կազմակերպությունը, նախքան «*Ներդրումային կազմակերպություններ*» փաստաթղթի փոփոխությունների սկզբնական կիրառման ամսաթիվը, օտարել է դուստր կազմակերպությունում ներդրումը կամ այլևս չունի հսկողություն դրա նկատմամբ, ապա ներդրումային կազմակերպությունից չի պահանջվում այդ ներդրման համար ճշգրտումներ կատարել նախորդ հաշվապահական հաշվառման մեջ:

18Թ. Չնայած 18Գ-18Է պարագրաֆներում սկզբնական կիրառման ամսաթվին անմիջապես նախորդող տարեկան ժամանակաշրջանի («անմիջապես նախորդող ժամանակաշրջան») հողումներին՝ կազմակերպությունը կարող է նաև ներկայացնել ճշգրտված համադրելի տեղեկատվություն՝ ներկայացված ցանկացած ավելի վաղ ժամանակաշրջանների համար, բայց որը չի պահանջվում: Եթե կազմակերպությունը չի ներկայացնում ճշգրտված համադրելի տեղեկատվություն ցանկացած ավելի վաղ ժամանակաշրջանների համար, 18Գ-18Է պարագրաֆներում «անմիջապես նախորդող ժամանակաշրջան» տերմինին կատարված բոլոր հղումները պետք է մեկնաբանվեն որպես «ներկայացված ամենավաղ ճշգրտված համադրելի ժամանակաշրջան»: Եթե կազմակերպությունը ներկայացնում է չճշգրտված համադրելի տեղեկատվություն ցանկացած ավելի վաղ ժամանակաշրջանների համար, պետք է հստակ որոշակիացնի այն տեղեկատվությունը, որը չի ճշգրտվել, նշի, որ այն պատրաստվել է այլ հիմունքով և բացատրի այդ հիմունքը:

18Ժ. «*Առանձին ֆինանսական հաշվետվություններում բաժնեմասնակցության մեթոդ*» (ՀՀՄՍ 27-ի փոփոխություններ), հրապարակված 2014 թվականի օգոստոսին, փոփոխվել են 4-7, 10, 11Բ և 12 պարագրաֆները: Կազմակերպությունը պետք է կիրառի հետընթաց՝ այդ փոփոխությունները 2016 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ համաձայն «*Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ*» ՀՀՄՍ 8-ի: Ավելի վաղ կիրառումը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը կիրառում է այդ փոփոխությունները ավելի վաղ ժամանակաշրջանի համար, պետք է բացահայտի այդ փաստը:

Հղումներ ՖՀՄՍ 9-ին

19. Եթե կազմակերպությունը կիրառում է սույն ստանդարտը, սակայն դեռևս չի կիրառում ՖՀՄՍ 9-ը, ապա ՖՀՄՍ 9-ին կատարված յուրաքանչյուր հղում պետք է

ընկալվի որպես հղում, կատարված «*Ֆինանսական գործիքներ. Ճանաչումը և չափումը*» ՀՀՄՍ 39-ին:

ՀՀՄՍ 27 (2008)-ի գործողության դադարեցումը

20. Սույն ստանդարտը հրապարակվել է ՖՀՄՍ 10-ի հետ միաժամանակ: Երկու ՖՀՄՍ-ները միասին փոխարինում են «*Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ*» (վերանայված՝ 2008 թվականին) ՀՀՄՍ 27-ին:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ